



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 1463-Ա/2

«03» սեպտեմբերի, 2021 թ.

**ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ
(ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ ՄԵԿՆԱՐԿԻ
ԿԱՄ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐԻ (ՔԱԺԻՆՆԵՐԻ) ԱՄՐԱՊՈՆԴՄԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ
ԳԻՏԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ ՀԱՅՏԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ
ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ ՑԱՆԿԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կարգը հաստատելու մասին» N 1122 որոշմամբ հաստատված կարգի 11-րդ կետը, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 661-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կանոնադրության 19-րդ կետի 20-րդ ենթակետը, Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի պաշտոնակատարի 2021 թվականի ապրիլի 27-ի N 620-Ա/2 հրամանը և Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի պաշտոնակատարի 2021 թվականի հուլիսի 23-ի N 1193-Ա/2 հրամանով ձևավորված մասնագիտական փորձագիտական խորհրդի 2021 թվականի սեպտեմբերի 2-ին կայացած նիստի արձանագրությունը, ինչպես նաև ելնելով բյուջետային հատկացումների ծավալից՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ

1. Հաստատել գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում գիտական խմբերի մեկնարկի կամ լաբորատորիաների (բաժինների) ամրապնդմանն աջակցության մրցույթի արդյունքում ֆինանսավորման երաշխավորված գիտական թեմաների ցանկը՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայրոցյանին՝ ապահովել գիտական թեմաների ֆինանսավորումը սկսած 2021 թվականի սեպտեմբերից:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայրոցյանին:

ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆ

ՑԱՆԿ

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ (ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ ՄԵԿՆԱՐԿԻ ԿԱՄ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐԻ (ԲԱԺԻՆՆԵՐԻ) ԱՄՐԱՊՆԴՄԱՆՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ

Հ/հ	Ծածկագիր	Թեմայի ղեկավար	Թեմայի վերնագիր	Կազմակերպություն
1	21SCG-1C019	Ալեքսանյան Էդուարդ Մնացականի	Պերովսկիտային արևային բջիջներ էներգետիկ անվտանգության և թափոնների նվազեցման նպատակով	ՀՀ ԿԳՄՍՆ «Ա.Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամ
2	21SCG-2J001	Ալեքսանյան Միքայել Սերյոժայի	Ածխածնի նանոխողովակների և նանոկոմպոզիտային միացությունների հիման վրա ճկուն գազային սենսորների պատրաստում	ԿԳՄՍՆ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամ
3	21SCG-1D013	Բեգլարյան Հայկ Ալեքսանի	Սիլիկատային կերամիկական պիգմենտների ստացման արդյունավետ եղանակի մշակում և ուսումնասիրություն	ՀՀ ԳԱԱ «Մ.Գ. Մանվելյանի անվ. ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտ» ՊՈԱԿ
4	21SCG-1D005	Գալստյան Արմեն Սուրենի	Ազոլների հենքի վրա ապիմետրիկ օրգանոկատալիզատիվ սինթեզ և ակտիվություն	ԿԳՄՍՆ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամ
5	21SCG-1F010	Զախարյան Ռոքսանա Վլադիսլավի	Միջերկրածովյան ընտանեկան տենդի մոլեկուլային մեխանիզմների ուսումնասիրություն գենային ճարտարագիտության և ֆունկցիոնալ գենոմիկայի մեթոդներով	«Հայ-ռուսական համալսարան» ԲՄԿՊՈՒՀ
6	21SCG-1E021	Կարապետյան Ջոն Կոստիկի	Մաթեմատիկական երկրաֆիզիկա և գեոինֆորմատիկա	ՀՀ ԳԱԱ «Ա.Նազարովի անվան երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտ» ՊՈԱԿ

7	21SCG-1C008	Հայրապետյան Դավիթ Բորիսի	Քվանտային հաշվարկումների համար կապված կոլոիդային քվանտային կետերի հիման վրա միաֆոտոն աղբյուրներ և խճճված ֆոտոնների զույգերի աղբյուրներ	«Հայ-ռուսական համալսարան» ԲՄԿՊՈՒՀ
8	21SCG-1F015	Ղազարյան Աստղիկ Սամվելի	Կենսաանվտանգության կարողությունների զարգացում Հայաստանում. Կաթնասունները որպես հիվանդությունների վեկտորներ	ԿԳՄՍՆ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամ
9	21SCG-2J022	Ղարազույան Հերմինե Սաշայի	Միաշերտ թաղանթների (գրաֆեն, գրաֆենի օքսիդ և MoS ₂) հեղուկ բյուրեղային կառուցվածքների ստացումը և կիրառումը տերահերցային քողարկիչ մետաձածկույթներում	ՀՀ ԳԱԱ «Ա.Նալբանդյանի անվան քիմիական ֆիզիկայի ինստիտուտ» ՊՈԱԿ
10	21SCG-1F016	Մարգարյան Արմինե Արմենի	Մետաղակայուն մանրէները որպես շրջակա միջավայրի կենսավերականգնման միջոցներ	ԿԳՄՍՆ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամ
11	21SCG-1D009	Մկրտչյան Աննա Ֆելիքսի	Նիկելի հարթ-քառակուսային կոմպլեքսների, որպես ունիվերսալ սինտոնների, ուսումնասիրումը տարբեր կենսաբանորեն ակտիվ միացությունների սինթեզներում	ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոն» ՊՈԱԿ
12	21SCG-1C012	Մուղնեցյան Վռամ Ներսեսի	Նանոկառուցվածքների մոդելավորման և սիմուլյացիաների գիտաուսումնական կենտրոնի ստեղծում	ԿԳՄՍՆ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամ
13	21SCG-1F006	Ներսիսյան Լիլիթ Ռոբերտի	Հակա- և պրո-բիոտիկների նկատմամբ բակտերիաների զգայունության գնահատման նոր մեթոդաբանության մշակում և կիրառում	ՀՀ ԳԱԱ «Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտ» ՊՈԱԿ
14	21SCG-2I017	Պալոյան Անի Միշայի	Ներբջջային եռֆերմենտային համակարգերի կիրառմամբ նոր էնանտիոմերապես մաքուր ամինաթթուների և դրանց ածանցյալների ստացում	ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոն» ՊՈԱԿ
15	21SCG-1B003	Սարգսյան Սևակ Սենիկի	Մշակել և իրականացնել ծրագրային ապահովման անվտանգության հետազոտության և սերտիֆիկացիայի համակարգ	«Հայ-ռուսական համալսարան» ԲՄԿՊՈՒՀ
16	21SCG-1C018	Քոթանջյան Տիգրան Վիլիկի	Աստղաֆիզիկական հետաքրքրություն ներկայացնող պրոտոն-միջուկային ռեակցիաների հետազոտումը C-18 ցիկլոտրոնի վրա	ՀՀ ԿԳՄՍՆ «Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամ